

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանը հայտարարում է
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության
ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու մասին

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության եւ վերլուծության բաժնի
առաջատար մասնագետի (65-3.3-16) ժամանակավոր թափուր պաշտոն

Բաժնի առաջատար մասնագետը,

Մասնակցում է մարզային զարգացման ծրագրերի (այսուհետ՝ ՄԶԾ), մասնավոր հատվածի ու արդյունաբերության, փոքր և միջին ձեռներեցության աջակցության, զբոսաշրջության և բարձր տեխնոլոգիաների կիրառման բնագավառներում Մարզպետին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացման աշխատանքներին, մասնակցում է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման համալիր ծրագրերի մշակման եւ ՄԶԾ-ի իրականացման մարզպետարանի տարեկան աշխատանքային պլանի (այսուհետ՝ ՏԱՊ) կազմման աշխատանքներին. մասնակցում է ՄԶԾ-ի մշակման ու իրականացման համար անհրաժեշտ կարևոր էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանների (համայնքների զարգացման քառամյա ծրագրերի, համայնքների հիմնախնդիրների (ըստ առաջնահերթության) կազմման աշխատանքներ, մասնակցում դրանց լուծման համար նախատեսված միջոցառումների, իրականացվող ծրագրերի և այլն) հավաքագրման, դասակարգման, արդիականացման աշխատանքներին. մասնակցում է զբոսաշրջության ոլորտի գրանցամատյանների կազմման, վարման, թարմացման, վարչական ռեգիստրի ներդրման, վարման և տեղեկատվական բազայի ստեղծման աշխատանքներին. մասնակցում է այլ երկրների համապատասխան մարմինների և միջազգային զբոսաշրջային կազմակերպությունների հետ հարաբերություններում Հայաստանի Հանրապետությունը և մարզը ներկայացնելու, բանակցային գործընթացի իրականացման, զբոսաշրջային բնագավառում մարզին վերաբերող համագործակցության փաստաթղթերի, ծրագրերի մշակման աշխատանքներին, Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին, իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ, իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է

- բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ. -համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում

-Դիմող ՀՀ քաղաքացիները Լոռու Մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
-գրավոր դիմում

-կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները,
աշխատանքային գրքույկի պատճենը՝ բնօրինակի հետ միասին,

-արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք
մեկ գունավոր լուսանկար՝ 3X4 սմ չափսի
անձնագրի պատճենը

Պայմանագրի գործողության ժամկետն է՝18.10.2018թ.

Աշխատավարձի չափը՝ 129634 ՀՀ դրամ

Փաստաթղթերն ընդունվում են՝ ս/թ հուլիսի 30-ից

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 01.08.2018թ.

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմում ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող եք
դիմել ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմ (ք. Վանաձոր, Հայքի հրապարակ, հեռ.2-10-24, էլ. հասցե՝
lori.andznakazm@mta.gov.am)